

փոքրիկ, հազիւ դիւզական ժողովրդին բաւական տարածութիւն ունեցող մի եկեղեցի է, բայց աչքի է ընկնում իւր կռկիկ, գեղեցիկ, նրբանկար և ներդաշնակ կերտուածով. բեմը, տեղանքը, խորանները, աւազանը, լուսամուտները, դռները և այլն և այլն մի մի մանրանկար են իսկական գաղափարական եկեղեցու մասերի. պատկերները, բոլորն էլ Ռուսաստանի մայրաքաղաքներում լաւագոյն գեղարուեստների արտադրութիւն, հրաշալի և հայկական, մանաւանդ բեմի վրայի Աստուածամօր և Փրէշական պատկերը, որպիսին չի կարելի տեսնել Թիֆլիսի բաղամօթիւ հայ եկեղեցիներում. նոյնը կարելի է ասել և զգեստների, անօթների ու զարդերի մասին. միով բանիւ եկեցու բարերարը աշխատել է այդ վիրախօս դիւղում մի գեղեցկադիր բարձրավանդակի վերայ կառուցանել մի փոքրիկ եկեղեցի—թանգարան, որից հիանում են ոչ միայն տեղական բնակիչները, այլ և քաղաքների բոլոր այցելուները: Ինչպէս տեղեկացանք պարոնը դիտաւորութիւն ունի եկեղեցուն կից բաւական կառուցանել և մի բնակարան բահանայի համար: Պատիւ և փառք նորան:

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծարգոյ Տ. Խմբագիր

Սեպուհ պարտականութիւն եմ համարում ինձ Ձեր պատուական հանդիսի միջոցով սրտագին շնորհակալութիւնս յայտնել և օրհնել այն բոլոր հաստատութիւններին և անձերին, որոնք անձամբ, հեռագրերիւրեւով և նամակներով շնորհաւորեցին իմ նշանակուելը յառաջնորդութիւն թեմին Հայոց Վրաստանն և Իմերէթի:

1904 թ. 13 Հոկտեմբերի  
Տփլիս

Գարեգին եպիսկոպոս:

### ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԻ ՀԱՅ ԳՐԶԱԳԻՐՆԵՐ.

Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Սանահնի վանքում գտնուած քսանեօթն հատ բաւական կարեւոր ձեռագիրներ նոյն վանքի նախկին վանահայր և այժմ թեմիս նորընտիր Ա. ռաջնորդ սրբազան Գարեգին եպիսկոպոսի կարգադրութեամբ ուղարկուել են Վեհափառ կաթողիկոսին ս. Էջմիածնի մատենադարանում պահելու համար: Գրչագիրներից հնագոյնը գրուած է հայոց Չ և փրկչական 1461 թուին, իսկ նոցա մէջ եղած Ընդհանրականի մի յիշատակարանից երևում է, որ այդ